«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 34-01/02

ք.Երևան, Արշակունյաց 5,417 սենյակ 05.10.2018թ. ժամը 18:00

«ՍԳԿԿ» ԻԿԿ դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանի 29.08.2018թ-ի թիվ 864 գրության հետագա ընթացքը ապահովելու նպատակով, սնանկության գործով կառավարիչ Հայկ Կոշեցյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի հոկտեմբերի 5-ին ժամը 18.00-ին՝11.09.2018թ-ի հետաձգված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Սնանկության գործով կառավարիչ Հայկ Կոշեցյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Սնանկության գործով կառավարիչ Հայկ Կոշեցյանը պատշաճ ծանուցված էր նիստի տեղի և ժամի վերաբերյալ,սակայն անհարգելի պատճառով նիստին չէր ներկայացել:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց սնանկության գործով կառավարիչ՝Հ.Կոշեցյանի վերաբերյալ «ՍԳԿԿ» ԻԿԿ դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանից 29.08.2018թ-ին ստացված թիվ 864 գրությունը և նրան կից փաստաթղթերը:Հանձնաժողովի նախագահն ներկայացրեց նաև որ սնանկության գործով կառավարչ՝Հ.Կոշեցյանը տեղեկացված է եղել դիմումի բովանդակությանը և բանավոր հայտնել է,որ իր դիմում նշված գործերով սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ նշանակվելը տեղի է ունեցել «ՍԳԿԿ»ԻԿԿ Դիտորդ խորհրդի 27.02.2017թ-ի որոշումից առաջ դատարաններում տվյալ գործերով ժամանակավոր կառավարիչ նշանակելու միջնորդությունների առկայության պատճառաբանությամբ:Հ.Կոշեցյանը ստացել է հանձնաժողովի նիստի վերաբերյալ ծանուցումները 01.10.2018թ-ին և մինչ օրս չի ներկայացրել ոչ գրավոր պատասխան և ոչ էլ որևե ապացույց իր հայտարարությունների վերաբերյալ:Հանձնաժողովի նախագահն առաջարկեց,քանի որ արդեն մեկ անգամ նիստը հետաձգվել է,ուստի նիստը սկսել և հարուցելով կարգապահական վարույթ քննությունը անցկացնել առանց կառավարչի ներկայության:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին առաջարկը և համաձայնեցին առաջարկի հետ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 5
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ՍԳԿԿ» ԻԿԿ դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանից 29.08.2018թ-ի թիվ 864 գրությանը՝սնանկության գործով կառավարիչ՝Հ.Կոշեցյանի գործողությունների և անգործության փաստերի վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահն առաջարկեց քննարկել գրության մեջ նշված և կից ներկայացված փասական հանգամանքները և հայտնել կարծիք:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը արտահայտեց հետևյալ կարծիքը, որ կառավարչի գործողությունները ըստ էության խախտում է ՍԳԿԿ ԻԿԿ Դիտորդ խորհրդի 27.02.2017թ-ին որոշմանը,ըստ որի որոշվել է «ՍԳԿԿ» ԻԿԿ անդամ Հայկ Կոշեցյանի գործունեության ժամկետը երկարաձգել 3 տարով :Նույն նիստում որոշվել է արգելափակել ԻԿԿ անդամի ինտերնոտային կայքում հայտ ներկայացնելու հնարավորությունը,վիճակահանությամբ գործեր չշահելու և նոր գործեր չվերցնելու համար:

Այսինքն գրությամբ արձանագրված այն փաստը որ 27.02.2017թ-ից մինչև 28.08.2018թ. ԻԿԿ անդամ Հ.Կոշեցյանը թվով 7 գործերով նշանակվել է սնանկության գործերով կառավարիչ,արդեն վկայում է,որ Հ.Կոշեցյանի կողմից խախտվել է Դիտորդ խորհրդի Որոշումը,որը կարգապահական խախտում է և պետք է կառավարչի համար առաջացնի հետևանքներ,կարգապահական տույժի ձևով:

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Աղամյանը հայտնեց այն կարծիքը,որ Դիտորդ խորհուրդի իր լիազորությունների սահմանում կայացրած որոշումը պարտադիր կատարման ենթակա է ԻԿԿ յուրաքանչյուր անդամի համար:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ համաձայն «Սնանկության գործերով կառավարիչի վարքագծի կանոնագրքի»

1.7.3 կետի կառավարիչը պարտավոր է իրազեկել Կազմակերպությանը այնպիսի հանգամանքների վերաբերյալ,որոնց հետևանքով ինքը կարող է չհամապատասխանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված սնանկության գործով կառավարչին առաջադրված պահանջներին:

2.7.8 կետով- Իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս ՍԳ կառավարիչը պարտավոր է պահպանել ՀՀ օրենսդրությամբ,«Սնանկության մասին»ՀՀ օրենքով,Կանոնադրությամբ,սույն Կանոնագրքով և կազմակերպության ներքին իրավական փաստաթղթերով սահմանված բոլոր պահանջները:

3.7.10. կետ.Այն դեպքում,երբ Կազմակերպության համապատասխան մարմինները հայտնաբերում են որևէ ՍԳ կառավարչի կողմից ... խախտում,իր լիազորությունների չարաշահում կամ ոչ պատշաճ իրականացում,պատշաճ կերպով տեղեկացնում են կառավարչին այդպիսի խախտումների վերաբերյալ և պահանջում վերացնել դրանք:

Նշված կետերի վերլուծությունից և ներկայացված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից պարզվում է,որ կազմակերպության կողմից հայտնաբերվել է Դիտորդ խորհրդի որոշման խախտումը և պատշաճ կերպով գրավոր,այդ մասին տեղեկացվել է կառավարչին 7 գործով առանձին առանձին,կառավարիչը ստացել է բոլոր գրությունները և մինչ օրս դրանց վերացման վերաբերյալ ոչ մի գործողություն չի կատարել,այդ թվում նաև հանձնաժողովի գրավոր պահանջներից հետո:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը և հիմք ընդունելով «Սնանկության գործերով կառավարիչի վարքագծի կանոնագրքի» 7.10.կետը,առաջնորդվելով ՝ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և ՍԳ կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 5.1.կետով,հանձնաժողովի նախագահն առաջարկեց՝սնանկության գործով կառավարիչ,ԻԿԿ անդամ՝Հայկ Կոշեցյանին ենթարկել կարգապահական տույժի,հայտարարելով հրապարակային հրապարակային նկատողություն:

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ.Խալաթյանը և Հ.Գևորգյանը համաձայնեցին այդ կարծիքին,բայց գտան,որ պետք նաև պարտավորեցնել Կառավարչին որպեսզի 1 ամսվա ընթացքում վերացնի խախտումները,այն է՝իր գործունեությունը համապատասխանեցնի Դիտորդ խարհրդի 27.02.2017թ-ի որոշման պահանջներին:

Հանձնաժողովի նախագահն առաջարկը դրեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 5
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանի 29.08.2018թ-ի թիվ 864 գրության հիքով սնանկության գործով կառավարիչ Հայկ Կոշեցյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի արդյունքներով միջնորդել «ՍԳԿԿ»ԻԿԿ Դիտորդ Խորհրդին՝«Կարգապահական Հանձնաժողովի գործունեության և ՍԳԿ նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» Կարգի 5 հոդվածի 5.1 մասի հիմքով հայտարարել սնանկության գործով կառավարիչ՝ Հայկ Կոշեցյանին հրապարակային նկատողություն և սահմանել հայտնաբերված կարգապահական խախտումները վերացնելու,այն է՝իր գործունեությունը համապատասխանեցնի Դիտորդ խարհրդի 27.02.2017թ-ի որոշման պահանջներին,1-ամսյա ժամկետ, որից հետո սնանկության գործով կառավարիչը պետք է դիտորդ խորհրդին ներկայացնի վերացման մասին գրավոր տեղեկատվություն և համապատասխան ապացույցներ:
2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:
3. Հանձնաժողովի քարտուղարին ապահովել կողմերին սույն եզրակացության ուղարկումը
Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան